ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-90/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությամբ ներկայացված «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05011878) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-90/16 բողոք), ինչպես նաև ՍՑ-ԳԲԽ-90/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 01.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.04.2016թ. թիվ ԴՎԱ/923 գրության հիման վրա, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12433-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 15.06.2016թ. թիվ 01/04.1/2331-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2016թ. թիվ 1/73-3/12433-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել

է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միևնույն ժամանակ Կենտրոնը արձանագրել է, որ Ընկերության կողմից մեկ անգամ է թույլ տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ուստի գտել է, որ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությամբ, վկայակոչելով Կարգի 124-րդ կետը, հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 21.04.2016թ. թիվ 01/04.1/1601-16 գրությամբ դիմել է «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան՝ Ընկերությունը 04.05.2016թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել իր առարկությունները, որի համաձայն՝ Ընկերությունը չի ստացել Պատվիրատուի ծանուցումը:

«ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 25.11.2016թ. ժամը 17:45-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-90/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.04.2016թ. թիվ ԴՎԱ/923 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը:

Կենտրոնը 23.05.2016թ. թիվ 02/04.1/1977-16 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի 04.05.2016թ. գրության պատճենը, որի

վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը 31.05.2016թ. թիվ ԴՎԱ/1455 գրությամբ հայտնել է, որ «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և 2015թ. նոյեմբերի 17-ին Ընկերության էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել պահանջվող որակավորման փաստաթղթերը:

Պատվիրատուն վերը նշված գրությամբ ներկայացրել է էլեկտրոնային փոստից համապատասխան ծանուցումը ուղարկելու քաղվածքը և տեղեկացրել, որ Ընկերությանը ծանուցումն ուղարկվել է Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով 25.11.2016թ. ժամը 17:45-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-90/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-90/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 01.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությամբ ներկայացված «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05011878) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-90/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությամբ ներկայացված «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված Ընթացակարգին մասնակցելու նպատակով 03.11.2015թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2015թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, առաջարկել է Ընկերությանը սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն Ընկերության կողմից փաստաթղթերը չեն ներկայացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.11.2015թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ մերժել է «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի հայտը:

4. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների կազմակերպման և վերլուծության վարչության 10.06.2016թ. թիվ 03.3/[6189]-16 գրության համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի փորձաքննությունը ցույց է տվել, որ Պատվիրատուի կողմից 17.11.2015թ. «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պահանջով կից ֆայլը:

5. Կենտրոնը 15.06.2016թ. թիվ 01/04.1/2331-16 գրությամբ արձանագրել է «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության մեկ անգամ խախտելու փաստը և ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությամբ, վկայակոչելով Կարգի 124-րդ կետը, հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2016թ. թիվ 1/73-3/12433-16 և 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 12.04.2016թ. թիվ ԴՎԱ/923 և 31.05.2016թ. թիվ ԴՎԱ/1455 գրությունները և կից փաստաթղթերը, «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի 04.05.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունները, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է

ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված Ընթացակարգին մասնակցելու նպատակով 03.11.2015թ. հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2015թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, առաջարկել է Ընկերությանը սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն Ընկերության կողմից փաստաթղթերը չեն ներկայացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.11.2015թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ մերժել է «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների կազմակերպման և վերլուծության վարչության 10.06.2016թ. թիվ 03.3/[6189]-16 գրության համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի փորձաքննությունը ցույց է տվել, որ Պատվիրատուի կողմից 17.11.2015թ. «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պահանջով կից ֆայլը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ն, որպես Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, մինչդեռ համաձայն Օրենքի և հրավերի պահաջների՝ մասնակիցը հայտով պարտավորվել է ներկայացնել հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից թույլ է տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հագնամանքը, որ «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում մեկ անգամ է խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, Խորհուրդը գտնում է, որ «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2016թ. թիվ 1/73-3/16793-16 գրությամբ ներկայացված «ՀՐՇԵՋ ԹՈՌՆԻԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05011878) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Նալբանդյան Մարտիկ**